

**ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱՆՐԱՅԻՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՆԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**ԾՐԱԳԻՐ**

**ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՆԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ**

**ԵՐԵՎԱՆ- 2008**

## Քույրանդակություն

Նախաբան.....	3
1. Կարգավորման օրենսդրական դաշտի կարգաբերականություն.....	4
2. Գործունեության լիցենզավորում և թույլտվությունների տրամադրում.....	8
3. Սակագնային քաղաքականություն.....	9
4. Կարգավորվող ընկերությունների ֆինանսապահպան- կան գործունեության վերլուծություն .....	12
5. Ներդրումային ծրագրերի համաձայնեցում, սպառողների սպա- սարկման որակի ցուցանիշների սահմանում և վերահսկում .....	13
6. Էլեկտրական, ջերմային էներգիայի և բնական գազի սպառման ծավալների կանխատեսում .....	16
7. Նեոահաղորդակցության բնագավառի կարգավորման առաջնահերթությունները.....	19
8. Սպառողների հետ տարվող աշխատանքներ.....	22
9. Աշխատանքը զանգվածային լրատվամիջոցների հետ.....	23
10. Նամագործակցություն .....	24

## ***Նախաբան***

Նայասարանի Նանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (այսուհետև՝ հանձնաժողով) էներգետիկայի, հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցության), փոստային կապի (ունիվերսալ ծառայությունների մասով), երկաթուղային տրանսպորտի (ենթակառուցվածքի օգտագործման վճարի սահմանման մասով), տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման (միայն սակագների մասով) բնագավառներում և ջրային ոլորտում կարգավորող մարմին է, որը գործում է «Նանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին», «Էներգետիկայի մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին», «Փոստային կապի մասին», «Երկաթուղային տրանսպորտի մասին», «Տեխնիկական արարորդման միջոցներով տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման ծառայությունների մատուցման սակագների սահմանման և վերանայման մասին» Նայասարանի Նանրապետության օրենքներով և Նայասարանի Նանրապետության ջրային օրենսգրքով իրեն վերապահված իրավասությունների շրջանակում:

Նանձնաժողովի կառուցվածքային ստորաբաժանումներն են.

- սակագնային քաղաքականության վարչություն՝

ա) սակագնային բաժին,

բ) ֆինանսական վերլուծության բաժին,

- իրավաբանական և լիցենզավորման վարչություն,

- լիցենզավորված գործունեության մոնիթորինգի և ներդրումային ծրագրերի վարչություն՝

ա) տեխնիկական մոնիթորինգի և փորձաքննության բաժին,

բ) ներդրումային ծրագրերի բաժին,

- հեռահաղորդակցության վարչություն,

- սպառողների հետ կապերի բաժին,

- տնտեսական բաժին,

- հաշվապահական հաշվառման բաժին,

- անձնակազմի կառավարման բաժին:

Նանձնաժողովի ստորաբաժանումների աշխատանքը, «Քաղաքացիական ծառայության մասին» Նայասարանի Նանրապետության օրենքի համաձայն, համակարգում է հանձնաժողովի աշխատակազմի ղեկավարը:

## **1. Կարգավորման օրենսդրական դաշտի կարարելիագործում**

### **Նեոահաղորդակցության բնագավառ**

Հանձնաժողովը 2008 թվականին մեծածավալ աշխատանքներ է փարել էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՏՏ օրենքով իրեն վերապահված գործառնություններն իրականացնելու համար: Մասնավորապես, հաշվի առնելով էլեկտրոնային հաղորդակցության բնագավառի զարգացման համաշխարհային միտումները և հանձնաժողովի կողմից հաստատված էլեկտրոնային հաղորդակցության բնագավառի կարգավորման քաղաքականությունը, հանձնաժողովն իր աշխատանքներն իրականացրել է՝ հիմնվելով ոլորտի արդյունավետ զարգացման՝ հանձնաժողովի ընդունած ուղղությունների և դրանց իրագործման համապատասխան ուղենիշների վրա: 2008 թվականին իրականացված աշխատանքներից հարկապես կարևորվում են հանրային էլեկտրոնային հաղորդակցության ամրակցված ցանցերով հեռախոսային ծառայությունների մատուցման և այդ ծառայություններից օգտվելու կանոնների մշակումը և հաստատումը: Մշակվել են նաև համարներ և կոդեր զբաղեցնող լիցենզավորված անձանց կողմից հանձնաժողով ներկայացվող հաշվետվությունների ձևերը, ռադիոհաճախականություններ փրամադրելու կանոնների, գերիշխող դիրք զբաղեցնող օպերատորների կողմից գծերի ենթակառուցվածքների գրնվելու վայրի և առկա թողունակության մասին տեղեկությունների հրապարակման կարգը, հանրային ամրակցված հեռախոսացանցի շահագործման մեջ գերիշխող դիրք զբաղեցնող օպերատորների կողմից այլ օպերատորներին ուղիղ գծերի փրամադրման կանոնները, փվյալների հաղորդման և ինփերնետ հասանելիության ծառայությունների մատուցման սակագները և դրանց պայմանների հրապարակման կարգը:

2009 թվականին հանձնաժողովը լիցենզավորման և թույլտվությունների փրամադրման գործընթացում հեղուկականորեն կառաջնորդվի կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց շահերի հավասարակշռման, նրանց համար գործունեության միատեսակ պայմանների ապահովման մեխանիզմների կարարելագործմամբ:

Ելնելով էլեկտրոնային հաղորդակցության բնագավառի զարգացման քաղաքականությամբ պայմանավորված առաջնահերթ խնդիրներից, հանձնաժողովը, 2009 թվականին, համագործակցելով ՏՏ փրանսպորտի և կապի նախարարության, ՏՏ վարչապետին առընթեր տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի և հասարակական կազմակերպությունների հետ, կարգավորման գործընթացները կդարձնի առավել թափանցիկ և ընկալելի:

Հաշվի առնելով 2008 թվականի կարարած աշխատանքները և ուսումնասիրելով այդ բնագավառի կարգավորման հարցում եվրոպական մի շարք երկրների

առաջավոր փորձը, հանձնաժողովը նախատեսում է 2009 թվականի ընթացքում, «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՏՏ օրենքով իրեն վերապահված իրավասությունների շրջանակում, շարունակել գործունեություն ծավալել հեղուկալուծություններով:

- հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի և ծառայությունների ոլորտում մրցակցության զարգացում,
- սահմանափակ ռեսուրսների, ներառյալ ռադիոհաճախականությունների փիրույթի և համարների ու կոդերի առավել արդյունավետ օգտագործման ապահովում,
- ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման և մատուցվող ծառայությունների տեսականու ավելացմանը խթանող իրավական դաշտի զարգացում,
- էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում տեղական և արտերկյա ներդրումները խթանող իրավական դաշտի զարգացում,
- հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի օպերատորների գործունեության որակի չափանիշների սահմանում, որոնք ապահովելով արդար և արդյունավետ մրցակցությունը մրցակցային ծառայությունների և ցանցերի ոլորտում, հնարավորություն կտան հնարավորինս մոտենալ հանրային էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում առաջադարձի դիրքեր զբաղեցնող երկրներին,
- մատուցվող ծառայությունների սպասարկման որակի չափանիշների սահմանում, որոնք հիմնված լինելով հանրային էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում համաշխարհային լավագույն փորձի վրա, կնպաստեն հանրապետությունում բնակչության սպասարկման որակի էական բարելավմանը,
- էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում համընդհանուր ծառայությունների մոդելի մշակում և կիրառում, որը կնպաստի հանրապետության հեռավոր տարածքներում էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների ոլորտում բնակչության նվազագույն կարիքների բավարարմանը և կապահովի այդ ծառայությունների մատչելիությունը և պարզաճ որակը,
- գերիշխող դիրքի չարաշահման դեպքերը կանխելու ու բացառելու համար համապատասխան քաղաքականության և միջոցառումների մշակում,
- գերիշխող օպերատորի գծի ենթակառուցվածքները այլ օպերատորների կողմից օգտագործման, ցանցի փոխկապակցման և սարքավորումների համատեղադրման կանոնների մշակում,

- հանրային շարժական կապի միջազգային ռոումինգ ծառայությունների մատուցման կանոնների կիրարկում,
- համալիր միջոցառումների մշակում և իրագործում, որոնք կնպաստեն միջազգային ինտերնետ հասանելիության ծառայությունների սակագների իջեցմանը և լայնաշերտ (արագագործ) ինտերնետ ծառայություններ մատուցելու համար անհրաժեշտ ենթակառուցվածքների զարգացմանը,
- էլեկտրոնային հաղորդակցության ոլորտի կարգավորմանը վերաբերող օրենսդրության կարարելագործում:

### **Էներգետիկայի բնագավառ և ջրային համակարգ**

Էներգետիկայի բնագավառի կարգավորման իրավական դաշտի կարարելագործման ուղղությամբ հանձնաժողովը 2008 թվականին մշակել և հաստատել է մի շարք իրավական ակտեր:

Նաշվի առնելով էլեկտրաէներգետիկական շուկայի կանոնների մաս կազմող կարգերի կիրարկման ընթացքում առաջ եկած խնդիրները, լրամշակվել են էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի և էլեկտրաէներգետիկական համակարգի լիցենզավորված այլ անձանց փոխհարաբերությունների կարգը և էլեկտրաէներգետիկական համակարգում էլեկտրաէներգիայի արտադրման և բաշխման, հաղորդման լիցենզիա ունեցող անձանց օպերատիվ փոխհարաբերությունների կարգը:

Էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնների կիրարկումն ապահովելու համար մշակվել և հաստատվել է նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգը էլեկտրական ցանցին միացման վճարների հաշվարկման մեթոդիկան, կարարվել են անհրաժեշտ փոփոխություններ էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոններում և այլ կարգերում:

Ի կարարումն «Էներգետիկայի մասին» ՆՏ օրենքի պահանջների, հանձնաժողովը 2008 թվականին մշակել և հաստատել է բնական գազի մատակարարման անխուսափելի սահմանափակումների հանգեցնող պայմաններում իրականացվելիք գործողությունների ծրագրերի մշակման կարգը, որը հիմք կհանդիսանա «ՆայՌուսգազարդ» ՓԲԸ-ի համար՝ կազմելու անխուսափելի սահմանափակումների հանգեցնող պայմաններում սպառողների գազամատակարարման սահմանափակումների ծրագրերը:

Կենցաղային նպատակներով բնական գազի սպառողների ներմային համակարգերի շահագործման անվտանգության մակարդակը գնահատելու նպատակով 2008 թվականին «ՆայՌուսգազարդ» ՓԲԸ-ում իրականացվել է շուրջ 1000

բնակիչ-բաժանորդների գազասպառման ներքնային համակարգերի տեխնիկական սպասարկման աշխատանքների կատարման ուսումնասիրություն, որի արդյունքների հիման վրա 2008 թվականին լրամշակվել է բնական գազի սպառման ներքնային համակարգերի տեխնիկական սպասարկման ծառայության մատուցման համաձայնագիրը: Նամաձայնագրի լրամշակման արդյունքում սահմանվել է տույժերի կիրառման մեխանիզմ, ինչը կնպաստի մատակարարի կողմից ներքնային համակարգերի տեխնիկական սպասարկման աշխատանքների լիարժեք կատարմանը:

Բնական գազի մատակարարի կողմից սպառողների սպասարկման որակի բարելավմանն ուղղված աշխատանքների արդյունավետության բարձրացման համար հանձնաժողովը 2008 թվականին իրականացրել է սահմանված ձևերով «Նայ-Ռուսգազարդ» ՓԲԸ-ի կողմից հանձնաժողով ներկայացվող տեղեկատվության հավաստիության ուսումնասիրություն: Արդյունքում՝ լրամշակվել են հանձնաժողովի կողմից սահմանված տեղեկատվական ձևերը: 2009 թվականի ընթացքում կշարունակվի տեղեկատվական բազայի ձևավորման գործընթացը, ինչը թույլ կտա հետագայում սահմանել սպառողների սպասարկման որակի՝ մասնավորապես, բնական գազի մատակարարման ընդհատման և դադարեցման դեպքերի քանակի և տևողության բազիսային ցուցանիշներ և վերահսկել դրանց պահպանումը: 2009 թվականի ընթացքում նախատեսվում է նաև մշակել նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգը գազամատակարարման համակարգին միացման կարգը և սահմանել միացման վճարներ:

Նանձնաժողովի կողմից մշակված և ընդունված օգտակար ջերմային պահանջարկի հիման վրա էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության (կոգեներացիա) իրավական դաշտը բարենպաստ պայմաններ է ստեղծում էներգետիկայի այս ուղղության զարգացման համար: Դրա վկայությունն են Երևանի Մ. Ներսիսյան անվան պետական բժշկական համալսարանի տարածքում տեղակայված և շուրջ մեկ տարի էլեկտրական և ջերմային էներգիա արտադրող 2x2 ՄՎտ հզորությամբ կոգեներացիոն կայանքները, որոնց միջոցով իրականացվում է վերոնշյալ համալսարանի և հարակից բուժօգնականների կենտրոնացված ջերմամատակարարումը: Ներկայումս իրականացման փուլում են գտնվում կենտրոնացված ջերմամատակարարման վերականգնման ևս երկու ծրագրեր. Երևանի Ավան թաղամասի 2 ՄՎտ հզորությամբ և Սևան քաղաքի 1-ից 6 միկրոշրջաններում 2x2 ՄՎտ հզորությամբ կոգեներացիոն կայանքների տեղակայումը:

Նանձնաժողովը 2008 թվականին շարունակել է աշխատանքները հանրապետությունում էներգիայի այլընտրանքային աղբյուրների արդյունավետ օգտագործման խթանման ուղղությամբ: Մասնավորապես, 100 ՄՎտ գումարային հզորությամբ հողմային էլեկտրակայանների կառուցման ծրագրի իրականացման նպատակով պտբենցիալ ներդրողի հետ կնքվել է փոխընթացման հուշագիր, որը հավաստել է

հանձնաժողովի պարասպասկանությունը՝ աջակցելու հողմային էլեկտրակայանների կառուցման և էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզավորմանը:

Որպես այլընտրանքային էներգիայի աղբյուրների օգտագործման հաջողված ծրագիր, կարելի է նշել կենսաբանական զանգվածից էլեկտրական էներգիա արտադրող կայանի կառուցումը, որն արդեն իսկ գործում է Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնքում:

Նանձնաժողովը քայլեր է ձեռնարկում նաև ջրամատակարարման ոլորտում սպառողների սպասարկման որակի բարելավման ուղղությամբ: «Նոր Ակունք», «Լոռի-ջրնուղկոյուղի», «Շիրակ-ջրնուղկոյուղի», «Նայջրնուղկոյուղի» և «Երևան Զուր» ՓԲԸ-ներում իրականացվել են սպառողների սպասարկման որակի ցուցանիշների գրանցամատյանների ներդրման աշխատանքները և 2006-2008 թվականների ընթացքում ընկերություններից ստացված տեղեկատվության հավաստիության ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա լրամշակվել են խմելու ջուր մատակարարող ընկերությունների սպառողների սպասարկման որակի ցուցանիշների գրանցամատյանների և դրանց վերաբերյալ հանձնաժողով ներկայացվող տեղեկատվության օրինակելի ձևերը: Նանձնաժողովը շարունակելու է իր վեբ կայքում ([www.psrc.am](http://www.psrc.am)) հրապարակել սպասարկման որակի վերաբերյալ եռամսյակային տեղեկատվությունը:

2009 թվականին կձեռնարկվեն նաև ահրաժեշտ քայլեր վերը նշված բնագավառներում նոր ներդրումների ներգրավման, դրան նպաստող օրենսդրական դաշտի կարարելագործման և սպառողների սպասարկման որակի բարելավմանը միտված ծրագրերի իրականացման ուղղությամբ:

## ***2. Գործունեության լիցենզավորում և թույլտվությունների տրամադրում***

Նանձնաժողովը 2008 թվականին շարունակել է կարգավորվող բնագավառներում գործունեության լիցենզիաների (թույլտվությունների) տրամադրման գործընթացը:

2008 թվականի հունվարի 1-ից մինչև սեպտեմբերի 1-ը էներգետիկայի բնագավառում տրամադրվել է փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման՝ 12, ջերմային էներգիայի փոխադրման ցանցի կառուցման՝ 1, ջերմային էներգիայի բաշխման ցանցի կառուցման՝ 1, փոքր հիդրոէլեկտրակայաններում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության 4 լիցենզիա, երկարաձգվել են նախկինում տրամադրված 16 լիցենզիաների գործողությունների ժամկետները, ինչպես նաև համաձայնություն է տրվել բաժնետոմսեր օտարելու՝ 1, լիցենզավորված գործունեության համար անհրաժեշտ գույքը գրավ դնելու՝ 6, գույքը վարձակալության իրավունքով տրամադրելու՝ 1 և գույքն օտարելու 2 դիմումներին:

Նույն ժամանակահատվածում էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում



հանձնաժողովը փրամադրել է փվյալների հաղորդման և ինտերնետ հասանելիության ծառայությունների մատուցման՝ 14, ձայնային ծառայությունների մատուցման՝ 40, հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի 11 լիցենզիա, համարների և կոդերի փրամադրման 61 և ռադիոհաճախականությունների օգտագործման 52 թույլտվություն:

Նանձնաժողովի կարգավորման ոլորտում գրավող էներգետիկայի, էլեկտրոնային հաղորդակցության բնագավառների լիցենզավորված անձանցից պետական փորձերի, ռադիոհաճախականության թույլտվության փրամադրման և օգտագործման, ինչպես նաև հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների, «էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՏՏ օրենքի պահանջների խախտման համար պուզանքների, Նայասփանի Նանրապետության էներգետիկայի բնագավառում նոր արտադրական հզորությունների կառուցման լիցենզիաների պայմանները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար ֆինանսական երաշխիքների գանձման արդյունքում 2008 թվականին Նայասփանի Նանրապետության պետական բյուջե կնուսքագրվի շուրջ 4.2 մլրդ դրամ, իսկ 2009 թվականին՝ շուրջ 5.1 մլրդ դրամ:

### ***3.Սակագնային քաղաքականություն***

Նանձնաժողովի կողմից իրականացվող սակագնային քաղաքականությունը հիմնվում է համաշխարհային պրակտիկայում ընդունված անհրաժեշտ հասույթի ապահովման սկզբունքի վրա և նպատակաուղղված է հանրային ծառայությունների ոլորտում կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց բնականոն փրսքեսական գործունեության ապահովմանը, ինչպես նաև սպառողների և կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց շահերի հավասարակշռմանը:

2008 թվականի մայիսի 1-ից բնական գազի սպառողների օգտին «Նայոուսգագարդ» փակ բաժնետիրական ընկերությանը վճարվող սուբսիդիայի դադարեցման հեղևանքով վերանայվեցին «Տրագդանի էներգետիկ կազմակերպություն (ՏրագՁԷԿ)» բաց և «Երևանի ՁԷԿ» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից առաքվող էլեկտրական էներգիայի (հզորության) սակագները: Միաժամանակ, վերջնական սպառողներին վաճառվող էլեկտրական էներգիայի սակագնի աճը կանխելու նպատակով վերանայվել են «Որոտան ՏԷԿՏ», «Երևանի ՁԷԿ» ՓԲԸ-ների կողմից առաքվող էլեկտրական էներգիայի (հզորության) և «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից էլեկտրաէներգետիկական համակարգին էլեկտրական էներգիայի հաղորդման ծառայության մատուցման սակագները՝ հաշվարկում չներառելով շահույթ և մաշվածություն: Վերանայվել են նաև «Նայկական արոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից առաքվող էլեկտրական էներգիայի (հզորության) սակագները:

Նաշվի առնելով «Նայասփանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի էլեկտրական

էներգիայի բաշխման լիցենզիայի պայմանները և հիմք ընդունելով էլեկտրաէներգիայի արտադրության ու սպառման կանխաբեռումները և ֆինանսական հաշվետվություններով ներկայացված փաստացի ծախսերի ու իրականացրած կապիտալ ներդրումների վերլուծության արդյունքները, հանձնաժողովը կճշգրտի «Նայասպանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի գործող սակագնային մարժայի մեծությունը: Կվերանայվեն նաև արտադրող կայաններից առաքվող էլեկտրաէներգիայի և էլեկտրաէներգետիկական համակարգին ծառայություններ մատուցող ընկերությունների սակագները:

Արդյունքում, 2009 թվականին նախաբեռվում է վերջնական սպառողներին վաճառվող էլեկտրական էներգիայի սակագնի վերանայում, որը կախված կլինի ինչպես Նայասպանի Նանրապետություն ներմուծվող բնական գազի գնի սպասվող բարձրացումից, այնպես էլ էներգետիկայի բնագավառում վերջին փարիներին կուրակված անհետաձգելի խնդիրների լուծման անհրաժեշտությունից՝ մասնավորապես, համակարգի միջին աշխատավարձի բարձրացումից, նոր ներդրումների վերադարձի ապահովումից, շահագործման և պահպանման ծախսերի (վերջին փարիների գնաճով պայմանավորված) վերանայումից:

Վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործմամբ աշխատող կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագների հաշվարկման մեթոդիկայի համաձայն՝ 2009 թվականի համար կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագները կճշգրտվեն հաշվարկային բանաձևով, որը թույլ կտա հաշվի առնել դրամի փոխարժեքի փոփոխումները և սղաճի ազդեցությունը: Այդ կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագների վերանայման գործընթացը կրում է շարունակական բնույթ և իրականացվում է յուրաքանչյուր փարի մինչև դեկտեմբերի 1-ը:

Նմանապես, օգտակար ջերմային պահանջարկի հիման վրա համակցված արտադրության (կոգեներացիա) էլեկտրական և ջերմային էներգիայի սակագների հաշվարկի մեթոդիկայի համաձայն, յուրաքանչյուր փարի իրականացվելու է սակագների ճշգրտում՝ հաշվի առնելով դրամի փոխարժեքի փոփոխումները, սղաճի ազդեցությունը և բնական գազի սակագնի փոփոխությունը:

Յուրաքանչյուր փարի՝ մինչև փարեվերջ, հանձնաժողովի կողմից ուսումնասիրվում և հաստատվում են երկդրույք սակագնային համակարգում գործող էլեկտրակայանների կողմից հանձնաժողովի համաձայնեցմանը ներկայացվող պայմանագրային և փնօրինելի էլեկտրական հզորությունների չափաքանակները:

«Նանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» ՏՏ օրենքի պահանջներից ելնելով՝ մինչև ընթացիկ փարվա ավարտը նախաբեռվում է ճշգրտել և հաստատել հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճար վճարողների 2009 թվականի անվանական կազմը և հանրային ծառայությունների

կարգավորման պարտադիր վճարների փարեկան մեծություններ:

2008 թվականի փետրվար ամսին «Երևան Զուր» ՓԲԸ-ն սակագների ճշգրտման առաջարկով դիմել է հանձնաժողով՝ հիմք ընդունելով բազիսային սակագների ճշգրտման մեթոդաբանությունում ամրագրված ցուցանիշների, այն է՝ մանրածախ ջրամատակարարման ծավալների, փարեկան սղաճի, եվրո/դրամ փոխարժեքի և ընկերությանը մատակարարվող էլեկտրաէներգիայի սակագների նախորդ՝ հաշվարկային փարում փեղի ունեցած փոփոխությունները: Մանրածախ ջրամատակարարման ծավալների հիմնավորման նպատակով իրականացվել է մոնիթորինգ, որի արդյունքների վերլուծության հիման վրա ընկերության ներկայացրած 2007 թվականի մանրածախ ջրամատակարարման սակագների ճշգրտման նպատակով հաշվառվող ծավալներն ավելացել են շուրջ 3.43 մլն խորանարդ մետրով: Ելնելով սակագնի ճշգրտման մեթոդաբանությամբ ամրագրված բոլոր գործոնների ազդեցության հանրագումարից՝ հաձնաժողովն ընկերության առաջարկած 10.95 դրամի (առանց ԱԱՏ -ի) փոխարեն սակագնի ճշգրտման ընդունելի մեծություն է համարել 7 դրամը (առանց ԱԱՏ -ի), որից 3 դրամը փեղափոխվել է 2010 թվականի, իսկ 4 դրամը՝ 2011 թվականի բազիսային սակագների վրա՝ անփոփոխ թողնելով 2008 թվականի սակագները:

Ելնելով մանրածախ ջրամատակարարման ծավալների, փարեկան սղաճի, եվրո/դրամ փոխարժեքի և «Երևան Զուր» ՓԲԸ-ն մատակարարվող էլեկտրաէներգիայի սակագների 2008 թվականի փաստացի գնահատականներից, 2009 թվականին նույնպես կճշգրտվեն ընկերության կողմից սպառողներին խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման բազիսային սակագները:

Ընթացիկ փարում հանձնաժողովը, համագործակցելով «ԱրմենՏել» ՓԲԸ-ի հետ, զգալի աշխատանքներ է իրականացրել հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների սակագների կարգավորման ուղղությամբ: Մասնավորապես, մշակվել և հաստատվել են «ԱրմենՏել» ՓԲԸ-ի կողմից մատուցվող սակագնային կարգավորման ենթակա հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների ցանկը, ծախսերի բաշխման մեթոդաբանությունը և մատուցվող ծառայությունների սակագների հաշվարկման մեթոդիկան:

Նաստատվել են «Նայփոսթ» ՓԲԸ-ի կողմից մատուցվող փոստային կապի ունիվերսալ ծառայությունների սակագների սահմանման ու վերանայման, ինչպես նաև փեխնիկական արտորոշման միջոցներով փրանսպորտային միջոցների պարտադիր փեխնիկական գննության անցկացման ծառայությունների մատուցման սակագների սահմանման ու վերանայման կարգերը:

2008 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ է մտել «Երկաթուղային փրանսպորտի մասին» Նայաստանի Նանրապետության օրենքի 11-րդ հոդվածը՝ հանձնաժողովին

վերապահված լիազորությունների մասով: Ներկայումս աշխատանքներ են տարվում ընդհանուր օգրագործման երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի օգրագործման վճարների սահմանման և վերանայման կարգի մշակման ուղղությամբ, որոնք կավարտվեն 2009 թվականին:

#### ***4. Կարգավորվող ընկերությունների ֆինանսադրամային գործունեության վերլուծություն***

Կարգավորվող ընկերությունների ֆինանսադրամային գործունեության վերլուծությունը, լինելով հանձնաժողովի կարևորագույն գործառնություններից մեկը, հնարավորություն է տալիս ֆինանսական հաշվետվությունների և տեղեկատվությունների հիման վրա գնահատել ոչ միայն ընկերությունների, այլև տվյալ բնագավառի ֆինանսական վիճակն ու գործունեության արդյունքները, օժանդակել կարգավորմանը վերաբերող հիմնավորված որոշումների ընդունմանը, ինչպես նաև սակագների սահմանման ու վերանայման, ներդրումային ծրագրերի իրականացման ընթացքի գնահատման, լիցենզիայի պայմանների վերահսկման նպատակով ստեղծել համապատասխան վիճակագրական տվյալների բազա:

Այդ առումով կարևորվում է կարգավորվող ոլորտների ընկերություններում ազգային հաշվային պլանին համապատասխանող հաշիվների և ենթահաշիվների նոր համակարգի ներդրումը, որը հնարավորություն է ընձեռում հստակ տարանջատել հիմնական (լիցենզավորված) և ոչ հիմնական գործունեության եկամուտներն ու ծախսերը, կատարել եկամուտների և ծախսերի մանրամասն հաշվառում և վերլուծություն:

Նաշվի առնելով էլեկտրաէներգետիկական և գազամատակարարման բնագավառների ընկերություններում ենթահաշիվների համակարգի ներդրման փորձը, հանձնաժողովը խմելու ջուր մատակարարող ընկերությունների համար ևս հաստատել է կարգավորմանը վերաբերվող հաշիվներ և ենթահաշիվներ և, որպես գործընթացի շարունակություն, նախատեսվում է մինչև 2008 թվականի վերջ լրամշակել խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից հանձնաժողով ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների ձևերը:

Ֆինանսադրամային վերլուծության կազմակերպման և կատարելագործման, ֆինանսական վերլուծության նպատակաուղղվածության և արդյունավետության բարձրացման աշխատանքները շարունակական զարգացում կունենան նաև 2009 թվականին: Մասնավորապես, աշխատանքներ կտարվեն էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում՝ «ԱրմենՏել» ՓԲԸ-ի համար և փոստային կապի բնագավառում՝ «Նայփոստ» ՓԲԸ-ի համար ենթահաշիվների համակարգ ներդնելու ուղղությամբ:

Փոստային կապի և էլեկտրոնային հաղորդակցության բնագավառներում ենթահաշիվների համակարգ ներդնելու հետ կապված՝ նախատեսվում է լրամշակել այդ բնագավառների ընկերությունների կողմից հանձնաժողով ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների ձևերը:

Նշված աշխատանքներն էապես կնպաստեն կարգավորվող ընկերությունների ծախսերի մոնիթորինգի արդյունավետության բարձրացմանը և առավել հիմնավորված սակագների սահմանմանը:

Էլեկտրաէներգետիկական և ջրային համակարգերի գործունեության մասին հանրությանն իրազեկելու նպատակով հանձնաժողովը շարունակելու է իր վեբ կայքում ([www.psrc.am](http://www.psrc.am)) հրապարակել կարգավորվող ընկերությունների գործունեության տեխնիկապնորհական ցուցանիշները:

### ***5. Ներդրումային ծրագրերի համաձայնեցում, սպառողների սպասարկման որակի ցուցանիշների սահմանում և վերահսկում***

2009 թվականին հանձնաժողովն իր գործառույթների շրջանակներում կշարունակի կարգավորվող ընկերությունների կողմից իրականացվող կարճաժամկետ և երկարաժամկետ ներդրումային ծրագրերի ուսումնասիրման և համաձայնեցման գործընթացը: Վերլուծության կենթարկվեն էներգետիկայի ոլորտի ընկերությունների 2008 թվականի ներդրումային գործունեության արդյունքները և կիրառարակվեն համապատասխան վերլուծական տեղեկանքներ: Կշարունակվեն նաև կարգավորվող ընկերությունների կողմից սպառողներին մատուցվող ծառայությունների որակի գնահատման չափանիշների կարարելագործման և վերահսկողության աշխատանքները:

2009 թվականին կշարունակվեն «Նայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից իրականացվող երկարաժամկետ ներդրումային ծրագրերի ուսումնասիրման և համաձայնեցման գործընթացում գնահատման նոր չափանիշների ներդրմանն ուղղված աշխատանքները: 2006 թվականին հանձնաժողովը, սահմանելով սպառողների հոսանքազրկումների քանակի և տևողության, սպառողների մոտ թույլատրելի սահմաններից էլեկտրական էներգիայի լարման շեղման դեպքերի քանակի և տևողության բազիսային ցուցանիշները, «Նայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի 2007-2009 թվականների ներդրումային ծրագրին առաջին անգամ պահանջներ է առաջադրել՝ այդ ցուցանիշների ծրագրային մեծությունների ապահովման տեսանկյունից: 2008 թվականին «Նայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի 2007 թվականի ներդրումային գործունեության արդյունքները գնահատելիս հաշվի են առնվել այդ ցուցանիշների փաստացի և ծրագրային մեծությունները, ինչպես նաև, հիմնվելով արդեն իսկ կուրակված փորձի վրա, ընկերության 2008-2010 թվականների

ներդրումային ծրագրում սպասարկման որակի ցուցանիշների ծրագրային մեծությունները սահմանվել են Նայաստանի Նանրապետության յուրաքանչյուր մարզի և Երևան քաղաքի համար: Այս մտրեցումը թույլ կտա ներդրումներն առաջին հերթին նպատակաուղղել առավել վարթար վիճակում գտնվող բնակավայրերի սպասարկման որակի ցուցանիշների բարելավմանը: Նարկ է նշել նաև, որ սպասարկման որակի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունը, սկսած 2005 թվականից, յուրաքանչյուր եռամսյակ ամփոփվում և հրատարակվում է հանձնաժողովի վեր կայքում: Նույն կարգով հրատարակվում են նաև ընկերության ներդրումային գործունեության արդյունքների վերաբերյալ կազմված վերլուծական տեղեկանքները:

Այսպիսով, 2009 թվականին, «Նայաստանի էլեկտրական ցանցեր» ընկերության 2008 թվականի ներդրումային գործունեության արդյունքների գնահատման ժամանակ, հանձնաժողովը հաշվի կառնի Նայաստանի Նանրապետության մարզերի և Երևան քաղաքի համար սահմանված սպասարկման որակի ծրագրային և փաստացի ցուցանիշները, ինչպես նաև կսահմանի նոր ծրագրային ցուցանիշներ՝ 2010-2013 թվականների համար:

2009 թվականից հանձնաժողովը համանման ցուցանիշներ կսահմանի «ՆայՌուսգագարդ» փակ բաժնետիրական ընկերության համար, որը թույլ կտա հետագայում ընկերության ներդրումային գործունեության արդյունքները ևս գնահատել այդ ցուցանիշների տեսանկյունից:

2004 թվականին հանձնաժողովը «Նայաստանի էլեկտրական ցանցեր», «ՆայՌուսգագարդ» և «Միջագային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ների, «Տրանսգագ» ՍՊԸ-ի և «ՆրագՋԷԿ» ԲԲԸ-ի համար սահմանել էր լիցենզավորված գործունեությանն առնչվող գնումների իրականացման կարգեր: Նպատակ ունենալով կարգավորվող ընկերությունների համար ապահովել գնումների իրականացման առավել ճկուն մեխանիզմներ, հանձնաժողովը 2008 թվականին այդ ընկերությունների համար սահմանել է միայն գնումների իրականացման սկզբունքներ՝ գնումների կարգերի սահմանման իրավասությունը վերապահելով ընկերություններին:

2009 թվականին կշարունակվի լիցենզավորված գործունեության համար անհրաժեշտ գնումների արդյունավետության բարձրացմանն ուղղված կիրառվող մեխանիզմների կատարելագործումը:

Սկսած 2007 թվականից, հանձնաժողովը աշխատանքներ է տանում խմելու ջուր մատակարարող ընկերություններին ներկայացվող սպասարկման որակի նվազագույն պահանջների կատարելագործմանն ուղղությամբ: 2008 թվականին «Նայջրմուղկոյուղի», «Երևան Զուր» և «Նոր Ակունք» ՓԲԸ-ներին նոր պայմաններ են առաջադրվել՝ ջրամատակարարման տևողության ցուցանիշների մասով: Այսուհետ յուրաքանչյուր տարի ընկերությունները հանձնաժողովի հաստատմանը կներկայացնեն սպառողների ջրամատակարարման տևողության փաստացի մեծությունները՝ տվյալ տարեսկզբի

դրությամբ և դրանց ծրագրային մեծությունները՝ հաջորդ փարեսկզբի համար: Այս մոտեցումը հնարավորություն կտա առաջնահերթ բարելավել առավել վարթար վիճակում գտնվող սպառողների ջրամատակարարման փնտրության ցուցանիշները: Նստակեցվել են նաև ջրամատակարարման գրաֆիկների հրապարակման պահանջները և բաժանորդներին դրանց մասին իրազեկման մեխանիզմները. ընկերություններն այսուհետև փարեկան առնվազն երկու անգամ՝ փվյալ փարվա ապրիլ և հոկտեմբեր ամիսների առաջին փասնօրյակի ընթացքում, փվյալ փարածքի բնակիչ-բաժանորդներին հասու առնվազն մեկ օրաթերթում կհրապարակեն իրենց սպասարկման փարածքի ջրամատակարարման գրաֆիկները: 2009 թվականին, ամբողջականացնելով այս պահանջները, հանձնաժողովը դրանք կկիրառի խմելու ջուր մատակարարող բոլոր ընկերությունների նկատմամբ:

Փոքր հիդրոէներգետիկայի բնագավառում ներդրումների խրախուսման ուղղությամբ հանձնաժողովի կողմից վարվող քաղաքականության արդյունքում յուրաքանչյուր փարի արձանագրվում են նոր դրական ցուցանիշներ, որոնք վկայում են բնագավառի զարգացման կայուն փեմպերի մասին: 2008 թվականի սեպտեմբերի 1-ի դրությամբ հանրապետությունում գործում են 65 փոքր հիդրոէլեկտրակայաններ, ևս 69-ը գտնվում են կառուցման փուլում: Այժմ գործող փոքր հիդրոէլեկտրակայանների գումարային հզորությունը կազմում է շուրջ 85 ՄՎտ, որոնք միջին փարեկան հաշվով ունակ են արտադրելու շուրջ 287 մլն կՎտժ էլեկտրաէներգիա: Կառուցվող փոքր հիդրոէլեկտրակայանների գումարային հզորությունը կազմում է շուրջ 153 ՄՎտ, և ակնկալվում է, որ գործարկումից հետո դրանք միջին փարեկան հաշվով կարտադրեն ավելի քան 553 մլն կՎտժ էլեկտրաէներգիա: Այսպիսով, ներկայիս փվյալներով 2012 թվականին Նայասփանի Նանրապետությունում կգործեն 134 փոքր հիդրոէլեկտրակայաններ, որոնք կունենան գումարային 238 ՄՎտ հզորություն և միջին փարեկան հաշվով կարտադրեն շուրջ 840 մլն կՎտժ էլեկտրաէներգիա, որը կազմում է ներկայիս սպառման ծավալների գրեթե 18%-ը:

Բարենպաստ պայմաններ ստեղծելով և խթանելով փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցումը, հանձնաժողովը միաժամանակ հեղևում է դրանց կառուցման ընթացքին՝ համապարասիսան պարժամիջոցներ կիրառելով իրենց պարտավորությունները պարշաճ կարգով չկարարող ընկերությունների նկատմամբ: 2008 թվականին, մինչև սեպտեմբերի 1-ը լիցենզիայի պայմաններով սահմանված ժամկետներում փոքր հիդրոէլեկտրակայանները չգործարկելու կամ դրանց համապարասիսան փորձաքննություններ անցած նախագծերը չներկայացնելու համար հանձնաժողովը կայացրել է 19 որոշում՝ 16 ընկերությունների ֆինանսական պարասիսանարվության ենթարկելու և 52 մլն դրամ պերական բյուջե փոխանցելու վերաբերյալ:

2009 թվականին կձեռնարկվեն անհրաժեշտ բոլոր քայլերը այս բնագավառի

գարգացման փեմպերը պահպանելու և նոր ներդրումներ ներգրավելու ուղղությամբ, իսկ իրենց պարտավորությունները պարզաճ կերպով չկատարող ընկերությունների նկատմամբ կշարունակվեն կիրառվել համապատասխան փուլեր:

### **6. Էլեկտրական, ջերմային էներգիայի և բնական գազի սպառման ծավալների կանխատեսում**

Վերլուծելով 2007 թվականի փարեկան և 2008 թվականի 6 ամիսների ընթացքում արտադրված, հաղորդված և բաշխված էլեկտրական ու ջերմային էներգիայի, ներկրված և բաշխված բնական գազի փաստացի ցուցանիշները, ընկերությունների կողմից ներկայացված նախնական կանխատեսումները, ինչպես նաև հաշվի առնելով կարգավորվող համակարգերի գարգացման միտումները, հանձնաժողովը կազմել է էլեկտրական, ջերմային էներգիայի և բնական գազի 2008 թվականին սպասվող և 2009 թվականի կանխատեսումային հաշվեկշիռները (աղյուսակներ №№ 1, 2, 3):

Ինչպես երևում է № 1 աղյուսակից, 2009 թվականին «Նայասարանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ մուրք գործող էլեկտրական էներգիայի ծավալի աճ նախատեսվում է ընդամենը 0.4%-ով: Մինչդեռ, կորուստների նվազման արդյունքում բաշխիչ ցանցերում էլեկտրական էներգիայի հաշվեգրված սպառումը կավելանա շուրջ 1% -ով:

2009 թվականին էլեկտրական էներգիայի ընդհանուր արտադրության մեջ սպրոնային էլեկտրակայանի մասնաբաժինը կանխատեսվում է 43.43% (2008 թվականին սպասվում է 39.6%), ջերմային էլեկտրակայաններինը՝ 25.33% (2008 թվականին սպասվում է 29.45%), հիդրոէլեկտրակայաններինը՝ 30.71% (2008 թվականին սպասվում է 30.5%), հողմային էլեկտրակայանինը՝ 0.03% (2008 թվականին սպասվում է 0.02%), կոգեներացիոն կայանինը՝ 0.4% (2008 թվականին սպասվում է 0.4%) և կենսաբանական զանգվածից էլեկտրական էներգիա արտադրող կայանինը՝ 0.1% (2008 թվականին սպասվում է 0.03%):

Երկրորդ աղյուսակում փրված են բնական գազի 2008 թվականին սպասվող և 2009 թվականի կանխատեսվող հաշվեկշիռները: Ըստ կանխատեսման, 2009 թվականին 2008 թվականի համեմատությամբ սպառողներին առաքվող բնական գազի ծավալը կաճի շուրջ 1.6%-ով, իսկ բնակչությանը մատակարարվող բնական գազի ծավալը՝ շուրջ 3.33%-ով:

Երրորդ աղյուսակում փրված են ջերմամատակարարման և արդյունաբերական կարիքների համար ջերմային էներգիայի 2008-2009 թվականների կանխատեսվող հաշվեկշիռները: «Նաիրիս գործարան» ՓԲԸ-ի կանխատեսումների համաձայն՝ 2009 թվականին 2008 թվականի համեմատությամբ շուրջ 58%-ով կավելանա արդյունաբերական կարիքների համար «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ից առաքվող ջերմային էներգիայի ծավալը:



**ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ 2008-2009 թթ. ՆԱՇՎԵԿՇԻՌԸ**

h/h	Ցուցանիշի անվանումը	Չափի միավոր	2008 թ. սպասվող	2009 թ. կանխատեսվող
1	Էլեկտրաէներգիայի արտադրություն, այդ թվում՝	մլն կՎտժ	<b>5934</b>	<b>5987</b>
1.1	<b>ՆԱԷԿ</b>	մլն կՎտժ	2350	2600
1.2	<b>ՆԷԿ-եր, որից՝</b>	մլն կՎտժ	1810	1839
1ՉԳ	<i>ՏՕՇՀՅ՝ ½՝ ³ ԱՇԿ՝ չՅ՝»ն. »i ՀԻ Իձնձ ան³ օՀ³   օ՝ Ա</i>	<i>ՍԷԿ Իi i Ա</i>	<i>555</i>	<i>450</i>
1ՉԸ	<i>Տաննի³ ԿՀ ԹՁԻ Թ   օ՝ Ա</i>	<i>ՍԷԿ Իi i Ա</i>	<i>900</i>	<i>1000</i>
1ՉԹ	<i>Օան³ ԹՁԻ</i>	<i>ՍԷԿ Իi i Ա</i>	<i>80</i>	<i>83</i>
1ՉՊ	<i>Օ³ ԵԿ³ Ի ան ÷ անն ԹՁԻ -»ն</i>	<i>ՍԷԿ Իi i Ա</i>	<i>275</i>	<i>306</i>
1.3	«Լոռի-1» հողմային էլեկտրակայան	մլն կՎտժ	1.1	1.6
1.4	«Երևանի Մ. Ներսիսյան անվան պետական բժշկական համալսարան» ՊՈԱԿ-ի կոգեներացիոն կայան	մլն կՎտժ	24	24
1.5	«Լուսակերպ Բիոգազ Փլանթ» ՓԲԸ-ի կենսաբանական զանգվածից էլեկտրական էներգիա արտադրող կայան	մլն կՎտժ	1.5	5.91
1.6	<b>ՋԷԿ-եր, որից՝</b>	մլն կՎտժ	1747.4	1516.49
1ՉԳ	<i>ՏԹն³ ½¹³ ԿՀ չՅ՝»ն. »i ՀԻ Ի³ ½Ս³ Ի»նձ անՁԻնձ (Թն³ ½աՁԻ)   օ՝ Ա</i>	<i>ՍԷԿ Իi i Ա</i>	<i>1407.4</i>	<i>1156.49</i>
1ՉԸ	<i>Տօն³ ԿՀ աՁԻ   օ՝ Ա</i>	<i>ՍԷԿ Իi i Ա</i>	<i>340</i>	<i>360</i>
2	Էլեկտրաէներգիայի ծախսը սեփական կարիքների համար	մլն կՎտժ	350	350
2.1	Նույնը՝ %-ով փող 1-ի նկատմամբ	%	5.898	5.846
3	Առաքում կայաններից, այդ թվում՝	մլն կՎտժ	<b>5584</b>	<b>5637</b>
3.1	մասնավոր փոքր ՆԷԿ-երից	մլն կՎտժ	270	300
4	<b>Ներհոսք</b>	մլն կՎտժ	180	200
5	Ընդամենը մուտք բարձր լարման էլեկտրացանցեր (փող3-փող3.1+ փող4)	մլն կՎտժ	5494	5537
6	Կորուստները բարձր լարման էլեկտրացանցերում	մլն կՎտժ	103	104
6.1	Նույնը՝ %-ով փող 5-ի նկատմամբ	%	1.87	1.88
7	<b>Արտահոսք</b>	մլն կՎտժ	250	300
8	Ընդամենը մուտք «Նայասարանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ (փող3+փող4-փող6-փող7), որից՝	մլն կՎտժ	<b>5411</b>	<b>5433</b>
8.1	Լեռնային Ղարաբաղի Նանրապետության համար	մլն կՎտժ	161	161
8.2	Ներքին շուկայում սպառման համար	մլն կՎտժ	5250	5272
9	Կորուստները բաշխիչ ցանցերում	մլն կՎտժ	708	685
9.1	Նույնը՝ %-ով փող 8.2-ի նկատմամբ	%	13.49	13.0
10	<b>Ներքին սպառում</b>	մլն կՎտժ	<b>4542</b>	<b>4587</b>

## ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ 2008-2009 թթ. ՆԱՇՎԵԿՇԻՈՒԸ

h/h	Ցուցանիշի անվանումը	Չափի միավոր	2008 թ. սպասվող	2009 թ. կանխա-պետվող
1	<b>Բնական գազի ներկրում</b>	մլն ն մ <sup>3</sup>	<b>2318</b>	<b>2349</b>
2	<b>Տեխնոլոգիական կորուստները գազի համակարգում</b>	մլն ն մ <sup>3</sup>	<b>147.5</b>	<b>146</b>
2.1	Նույնը՝ %-ով փող 1-ի նկատմամբ	%	6.36%	6.21%
3	<b>Գազի ծախսը սեփական կարիքների համար</b>	մլն ն մ <sup>3</sup>	<b>10.5</b>	<b>10</b>
3.1	Նույնը՝ %-ով փող 1-ի նկատմամբ	%	0.45%	0.44%
4	<b>Մղվել է սպորգեփայտ պահեստարաններ</b>	մլն ն մ <sup>3</sup>	<b>100</b>	<b>100</b>
5	<b>Բնական գազի առաքումը սպառողներին որից՝</b>	մլն ն մ <sup>3</sup>	<b>2060</b>	<b>2093</b>
5.1	Ջերմային էլեկտրակայաններ	մլն ն մ <sup>3</sup>	590	560
5.2	Արդյունաբերություն	մլն ն մ <sup>3</sup>	410	420
5.3	Բյուջեպային կազմակերպություններ	մլն ն մ <sup>3</sup>	40	43
5.4	Բնակչություն	մլն ն մ <sup>3</sup>	600	620
5.5	Այլ սպառողներ	մլն ն մ <sup>3</sup>	420	450

## ՋԵՐՄԱՅԻՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ 2008-2009 թթ. ՆԱՇՎԵԿՇԻՈՒԸ

h/h	Ցուցանիշի անվանումը	Չափի միավոր	2008թ. սպասվող	2009 թ. կանխա-պետվող
1	<b>Ջերմային էներգիայի արտադրությունը, այդ թվում՝</b>	հազ ԳՋ	<b>1717.25</b>	<b>2757.65</b>
1.1	«Երևանի ՋԷԿ» ՓԲԸ	հազ ԳՋ	1717.25	2757.65
2	<b>Ջերմային էներգիայի կորուստները, այդ թվում՝</b>	հազ ԳՋ	<b>123.64</b>	<b>203.34</b>
2.1	«Երևանի ՋԷԿ» ՓԲԸ	հազ ԳՋ	123.64	203.34
2.1.1	Նույնը՝ %-ով փող 1.1-ի նկատմամբ	%	7.2%	7.37%
3	<b>Ջերմային էներգիայի ծախսը սեփական կարիքների համար, այդ թվում՝</b>	հազ ԳՋ	<b>25.6</b>	<b>76.78</b>
3.1	«Երևանի ՋԷԿ» ՓԲԸ	հազ ԳՋ	25.6	76.78
3.1.1	Նույնը՝ %-ով փող 1.1-ի նկատմամբ	%	1.49%	2.78%
4	<b>Ջերմային էներգիայի օգտակար առաքումը, այդ թվում՝</b>	հազ ԳՋ	<b>1568.01</b>	<b>2477.53</b>
4.1	«Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ից՝ արդյունաբերական կարիքների համար	հազ ԳՋ	1568.01	2477.53

## **7. Նեռահաղորդակցության բնագավառի կարգավորման**

### **առաջնահերթություններ**

Էլեկտրոնային հաղորդակցության բնագավառի կարգավորման քաղաքականությունը կյանքի կոչելու նպատակով հանձնաժողովը կօգտագործի լիցենզավորման, ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվությունների սահմանադրման, շուկայական մրցակցության պաշտպանության և ոլորտի առանձին հարվածների կարգավորման մեխանիզմները: Ընդ որում, հաշվի առնելով Առևտրի համաշխարհային կազմակերպության, Եվրոպական միության և Նեռահաղորդակցության միջազգային միության առաջարկներն ու կարգավորման ստանդարտները, ինչպես նաև Նայասպանի Նանրապետությունում էլեկտրոնային հաղորդակցության շուկայի առանձնահատկություններն ու առկա իրավիճակը:

Նիսք ընդունելով էլեկտրոնային հաղորդակցության բնագավառի կարգավորման քաղաքականության ուղենիշները, հանձնաժողովը 2009 թվականի ընթացքում իր գործունեությունն իրականացնելու է հետևյալ ուղղություններով.

#### ***ա) Լիցենզավորում (ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվությունների սահմանադրում), որն իրականացվելու է՝***

- սահմանելով լիցենզավորման համար ներկայացվող փեխնիկական նախագծերում ներառվող փաստաթղթերի նվազագույն ծավալը և անհրաժեշտ փեխնիկական լուծումների ընդգրկման սահմանները,
- մրցույթով կամ աճուրդով լիցենզիաների ստացման հնարավորության ընձեռնամբ:

#### ***բ) Ռադիոհաճախականությունների փիրույթի կառավարում, որն իրականացվելու է՝***

- մշակելով ռադիոհաճախությունների փիրույթի արդյունավետ օգտագործման ճկուն քաղաքականություն,
- վերանայելով սահմանված ռադիոհաճախականությունների գրանցման և օգտագործման վճարների չափերը,
- պարզեցնելով սահմանադրման գործընթացները:

#### ***գ) Շուկայական մրցակցության պաշտպանության ապահովում***

Պարբերաբար կկատարվեն հետազոտություններ՝ էլեկտրոնային հաղորդակցության շուկայում մրցակցության իրավիճակը գնահատելու և հնարավոր հակամրցակցային երևույթները բացահայտելու նպատակով:

**դ) Տամբնդհանուր (ունիվերսալ) ծառայությունների ապահովում**

Այս ծառայություններն ապահովելու նպատակով նախատեսվում է՝

- 1) մանրամասն ուսումնասիրել էլեկտրոնային հաղորդակցության շուկայի (բնակչության մասնավոր և հանրային հատվածի) կարիքները՝ համբնդհանուր ծառայությունների արդյունավետ մոդել մշակելու նպատակով,
- 2) սահմանել համբնդհանուր ծառայությունների մատուցման պայմանները,
- 3) աշխատանքներ փնտել «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՏՏ օրենքի համաձայն համբնդհանուր ծառայությունների հիմնադրամ ստեղծելու ուղղությամբ, որտեղ պետք է մասհանումներ կատարեն էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններ մատուցողները:

Լիցենզիաների պայմանների կատարման ընթացքին հետևելու նպատակով 2009 թվականի ընթացքում հանձնաժողովը պարբերաբար ուսումնասիրություններ կիրականացնի էլեկտրոնային հաղորդակցության բնագավառի լիցենզավորված ընկերություններում: Տայաստանի Տանրապետության հետագա զարգացումը մեծապես պայմանավորված է ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ներդրմամբ, ինչի առնչությամբ 2009 թվականին հանձնաժողովի ուշադրության կենտրոնում կլինի հանրապետությունում ինտերնետ հասանելիության ծառայությունների բարելավման հարցը: Այդ նպատակով նախատեսվում է արագագործ ինտերնետային ծառայություն մատուցելու հնարավորությունների առկայության վերաբերյալ ուսումնասիրություններ կատարել հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում: Տաշվի կառնվեն և կխրախուսվեն ընկերությունների բոլոր այն նախաձեռնությունները, որոնք միտված կլինեն նպաստելու տեղեկատվական և էլեկտրոնային հաղորդակցության բնագավառներում նոր տեխնոլոգիաների ներդրմանը:

«ԱրմենՏել» և «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ների մրցակցության արդյունքում 2008 թվականին անհամեմատ բարձրացել է մատուցվող ծառայությունների որակը. արդեն հանրությանը մատուցվում են նոր ծառայություններ, մասնավորապես, GPRS (տվյալների հաղորդման և ինտերնետ հասանելիության ընձեռում), MMS (մուլտիմեդիա հաղորդագրությունների ծառայություն), կանխավճարային քարտերի միջազգային ռումինգ և այլն: Տանձնաժողովը 2009 թվականի ընթացքում, կիրականացնի համապարփակ ուսումնասիրություններ բջջային կապի երրորդ օպերատորի բջջային կապի շուկա մուտք գործելու և դրանով պայմանավորված՝ շուկայի կառուցվածքի հնարավոր փոփոխությունների վերաբերյալ: Բջջային կապի երրորդ օպերատորի գործունեությունն ապահովելու համար 2009 թվականին անհրաժեշտ կլինի մշակել և ներդնել այնպիսի կանոնակարգեր և կանոններ, որոնք թույլ կտան ապահովել բջջային կապի երրորդ օպերատորի և՛

- ա) «ԱրմենՏել» և «Ղ-Տելեկոմ» ընկերությունների փոխկապակցման խնդիրների լուծումը,
- բ) հեռահաղորդակցության բնագավառում այլ լիցենզավորված անձանց միջև փոխկապակցման փոխանակման հնարավորությունը,
- գ) այլ օպերատորների ենթակառուցվածքների և ծառայությունների համապեղ օգտագործումը:

Ներկայումս գիտատեխնիկական առաջընթացի համաշխարհային միտումներին և նկատի ունենալով, որ Նայասպանի Նանրապետությունում նույնպես անհրաժեշտություն կառաջանա անցնելու նոր սերնդի ցանցերի (NGN- Next Generation Networks) ներդրմանը, 2009 թվականին հանձնաժողովը կսկսի այդ ցանցերի շահագործման հետ կապված խնդիրների ուսումնասիրությունը, հարկապես կարևորելով «ԱրմենՏել» ՓԲԸ-ի ամրակցված ցանցերի զարգացման և բջջային կապի օպերատորների ցանցերի փոխկապակցման խնդիրները: Նոր սերնդի ցանցերի ներդրման հետ կապված՝ առաջին պլան կնդվի կոնվերգենցիայի՝ փարբեր կառուցվածք և փարբեր փոխնույնացիական կապարում ունեցող ցանցերի հարկանիշների մերձեցման խնդիրը, նոր փոխնույնացիաների մուտքով կիրառման փոխկապակցման խնդիրները: Նանձնաժողովը պետք է պարբերաբար լինի զարգացումների հետագա ընթացքին և իր իրավասությունների շրջանակում մշակի կարգավորման այնպիսի մեխանիզմներ, որպեսզի նոր սերնդի ցանցերի մուտքը շուկա բացասաբար չազդի դեռևս կայացման փուլում գտնվող շուկայական հարաբերությունների վրա:

2009 թվականի ընթացքում հանձնաժողովի գործունեությունն ուղղված կլինի նաև բջջային կապի 3-րդ սերնդի ցանցերի՝ 3G սրանդարտի ներդրման ծավալների աճին, ինչը հնարավորություն կընձեռի բջջային ցանցերի բաժանորդներին շարքարձարագագործություն ունեցող համակարգի միջոցով սրանալ ծառայությունների ավելի մեծ տեսականի՝ փոխկապակցման հոսքերի հսկայական ծավալներով: Ապահովելով ինտերնետի օգտվելու լիարժեք հնարավորություն մեծ արագագործությամբ, 3G սրանդարտը հնարավորություն կտա բաժանորդներին օգտվել նաև կորպորատիվ ցանցի հեռակա (удаленный доступ) օգտագործման հնարավորությունից՝ բջջային հեռախոսակապի միջոցով, այն է՝ անցկացնել կամ մասնակցել տեսակոնֆերանսի, օգտվել ապրանքների կամ ծառայությունների համար վճարման էլեկտրոնային փարբերակից, սրանալ բժշկական ախտորոշման ծառայություններ և այլն:

2009 թվականին հանձնաժողովի ուշադրության կենտրոնում կլինեն նաև սպառողների և լիցենզավորված անձանց իրավունքների պաշտպանության, մարտնչված ծառայությունների որակի և այդ ծառայությունների տեսականու ընդլայնման հարցերը:

Ելնելով հանրային շահերից, 2009 թվականի ընթացքում կընդունվեն

կանոնակարգեր, որոնք հնարավորություն կընձեռեն խթանել մարզերում հեռահաղորդակցության բնագավառի զարգացումը: Նախկապես հեռավոր մարզերում հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի կառուցման համար նպաստավոր պայմաններ սրելով՝ հանձնաժողովը կնպաստի այդ բնակավայրերի գիտատեխնիկական առաջընթացին, ինչը Նայաստանի Նանրապետության զարգացման գերակա խնդիրներից է:

Ներկելով բջջային կապի զարգացման և էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում լայնաշերտ ծառայությունների մատուցման (broadband) համաշխարհային զարգացումներին, հանձնաժողովը կարևորում է 2009 թվականի ընթացքում էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում լայնաշերտ ծառայությունների մատուցման համար բարենպաստ պայմաններ սրելով: ու այդ ծառայությունների մատուցման համար նպաստավոր իրավական դաշտ ձևավորելու աշխատանքները:

### **8. Սպառողների հետ տարվող աշխատանքներ**

Նանձնաժողովը անհրաժեշտ քայլեր է ձեռնարկում սպառողների և կարգավորվող ընկերությունների իրավունքների պաշտպանության և շահերի հավասարակշռման ուղղությամբ:

Կարգավորվող անձանց հետ համարել, հասարակական կազմակերպությունների ու սպառողների մասնակցությամբ, պարբերաբար քննարկումներ են կազմակերպվում սպառողների հարցադրումների և բողոքների վերաբերյալ:

Նանձնաժողովի համապատասխան ծառայությունը 2008 թվականի սկզբից մինչև սեպտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում սրացել է 144 գրավոր բողոք, «Նրաբապ հեռախոսով» և քաղաքացիների ընդունելության արդյունքում՝ 526 բողոք և հարցադրում, որոնցում բարձրացված բոլոր խնդիրներին համապատասխան ընթացք է փոխվել: Քննարկումների շրջանակներում, հարցերն ավելի մանրամասն ուսումնասիրելու նպատակով, կարարվել է 8 սպուգայց:

Սպառողներին ավելի լիարժեք իրազեկելու նպատակով «Սպառողների իրավունքների պաշտպանություն» հասարակական կազմակերպության հետ համարել նախատեսվում է 2009 թվականին փոխադրել և անհատույց փարածել բրոշյուրներ՝ կարգավորվող ոլորտներում հանձնաժողովի կողմից հաստատված մարակարարման և օգտագործման կանոններում և այլ իրավական փաստաթղթերում կարարված փոփոխությունների վերաբերյալ:

2009 թվականին կշարունակվի հանձնաժողովի մասնագետների մասնակցությունը ՏՏ օրենքների և իրավական ակտերի մասին սպառողներին իրազեկելու և դրանք պարզաբանելու նպատակով կազմակերպվող հեռուստատեսային

հաղորդումներին:

Սպառողների հետ առավել սերտ շփումներ ապահովելու նպատակով շարունակվում է հանձնաժողովի նախագահի, նախագահի փեղակալի և հանձնաժողովի անդաների կողմից քաղաքացիների ընդունելության գործընթացը:

### **9. Աշխատանքը զանգվածային լրատվամիջոցների հետ**

Նանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը, կարևորելով թափանցիկ և հրապարակային գործունեության՝ արդեն իսկ ձևավորված իր աշխատանքը, նախատեսում է 2009 թվականին ամրապնդել արձանագրված դրական քայլերն ու հաջողությունները:

Նախորդ տարիների համեմատ աճել է հանձնաժողովի գործունեության նկատմամբ ՋԼՄ-ների վստահության աստիճանը, ինչը նպաստել է կարգավորող մարմնի գործառույթների, հանրային ծառայություններից օգրվող բաժանորդների իրավունքների և պարտավորությունների մասին հանրության առավել լիարժեք պարկերացմանը: 2009 թվականին ծրագրվում է առավել խորացնել այս ձեռքբերումը՝ ՋԼՄ-ների ներկայացուցիչների հետ, անհրաժեշտության դեպքում, աշխատել նաև անհատական ձևով:

2009 թվականին կշարունակվի հանձնաժողովի նիստերի մասին հանրությանը ինֆերմետրային կայքէջի, փապգիր մամուլի, էլեկտրոնային լրատվամիջոցների օգնությամբ ծանուցման գործընթացը: Նիստերի ավարտից հետո, անհրաժեշտության դեպքում, ընդունված որոշումների վերաբերյալ կտրվեն մեկնաբանություններ, լրագրողների համար կկազմակերպվեն ճեպագրույցներ:

Վանձնաժողովի նախագահը, անդամները և աշխատակազմի մասնագետները հանձնաժողովի գործառույթների, իրավասությունների, հասարակական հնչեղություն ունեցող որոշումների, հարցերի շուրջ փարբեր հեռուստաընկերություններով, հանրային ռադիոյով, լրատվական գործակալություններով, օրաթերթերում պարբերաբար հանդես կգան ճանաչողական բնույթի հաղորդումներով, պարզաբանումներով և հարցազրույցներով: Կշարունակվի մամուլի հրապարակումների ամենօյա վերլուծությունը. հանձնաժողովի գործունեության մասին հրապարակումները կներկայացվեն աշխատակազմին՝ դրանով իսկ դիտարկելի դարձնելով ծառայություններ մատուցող ընկերությունների, հանրության կարծիքն ու գնահատականը: Լրատվամիջոցների հաղորդած փեղեկությունները, ընկերություններից համապատասխան պարզաբանումներ ստանալուց հետո, կօգտագործեն մատուցվող ծառայությունների որակի մասին հանձնաժողովի նպատակային ուսումնասիրություններում:

Պարբերաբար կթարմացվի և կհարստացվի ինֆերմետրային կայքը, դրանից

օգտվող լրագրողների համար կստեղծվեն աշխատանքային նպաստավոր պայմաններ:

2009 թվականի ընթացքում զանգվածային լրավամիջոցների հետ աշխատանքը կծավալվի համագործակցության հնարավոր բոլոր ձևերով և եղանակներով, հավասարաչափ կկարևորվեն էլեկտրոնային, հեռախոսային, բանավոր հաղորդակցության ձևերը, անմիջական շփումները: Մտապահարար ընկերությունների հանրային կապերի, մամուլի պատասխանատուների հետ կշարունակվի մատուցվող ծառայությունների որակի բարձրացմանը նպաստող սերտ համագործակցությունը:

### **10. Նամագործակցություն**

Միջազգային փորձի վերաբերյալ ընդգրկուն տեղեկատվություն ստանալու և Նայաստանի Նանրապետության առանձնահատկություններից էլնելով՝ այն տեղայնացնելու նպատակով, հանձնաժողովը կշարունակի համագործակցությունը հեռահաղորդակցության միջազգային միության (ՆՄՄ) ստորաբաժանումների հետ:

Միջազգային փորձը ուսումնասիրելու և իրենց որակավորումը բարձրացնելու նպատակով հանձնաժողովի մասնագետները կմասնակցեն Նամաշխարհային բանկի, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության, հեռահաղորդակցության միջազգային միության (ՆՄՄ) կողմից կազմակերպվող սեմինարներին:

2009 թվականին նախատեսվում է հանձնաժողովի մասնագետների մասնակցությունը էներգետիկայի կարգավորող հանձնաժողովների տարածաշրջանային ընկերակցության (ERRA) հերթական հանդիպումներին և նիստերին, համաշխարհային բանկի, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության և Կրթությամբ զարգացման ակադեմիայի կողմից կազմակերպվող սեմինարներին:

2009 թվականին հանձնաժողովը համապատասխան աշխատանքներ կիրականացնի համագործակցության եզրեր գտնելու միջազգային հեղինակավոր այնպիսի կազմակերպությունների հետ, ինչպիսիք են՝

1. «Էլեկտրակապի եվրոպական կառավարումը», որի օժանդակությամբ կայացել են արևելյան եվրոպայի բազմաթիվ երկրների հեռահաղորդակցության ազատականացված շուկաները,
2. Կապի միջազգային ինստիտուտը, որը միավորելով կարգավորող մարմինները, կառավարական և գիտական հաստատություններն ու նրանց միջև գաղափարների փոխանակման հնարավորություններ ընձեռելով, նպաստում է հեռահաղորդակցության ոլորտի զարգացմանը:

Նանձնաժողովը՝ ղեկավարվելով «Նանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՏՏ օրենքով և Նայաստանի Նանրապետության օրենսդրությամբ, իրեն վերապահված լիազորությունների շրջանակում կներդնի անհրաժեշտ ջանքեր՝ ծրագրով նախատեսված աշխատանքները լավագույն ձևով իրականացնելու համար: